# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 33

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 25 դեկտեմբերի 2005թվականի թիվ 2387-Ն որոշման սահմանված կարգով՝ *որոշում եմ.*

1. Սարգիսովա Լյուսյա Արշակի սեփականության իրավունքով պատկանող /սեփականության վկայական 1318808/ բնակելի տանը Կոտայքի մարզի Ջրառատ համայնքում տրվել է հասցե՝ 5 Փ, 9 տուն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ______________ _____
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 34

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ԹԻՎ 6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2021թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 01/08.2/06200-2021 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Ջրառատ համայնքի ղեկավարի 2016թվականի փետրվարի 16-ի ««Հայաստանի հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 06 որոշման հավելվածի 27-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ.

«27.1. Աշխատակազմի քարտուղարին.
ա/ապահովել սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը.

27.2 Համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված անձի վերաբերյալ տվյալները մեկօրյա /աշխատանքային/ ժամկետում ներկայացնել տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու /կարգապահական տույժ կիրառելու/ իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

27.3 Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք պարտավոր են աշխատանքի / ծառայության/

ներկայանալիս Աշխատակազմի քարտուղարին ներկայացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի /ծառայության/ ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:

27.4 Մինչև վերոհիշյալ 27.3-րդ կետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը, յուրաքանչյուր օր աշխատանքի /ծառայության/ ներկայանալը համարվում է /դիտվում է/ որպես առանձին /ինքնուրույն/ կարգապահական խախտում:

27.5 Մինչև կարգապահական տույժ նշանակելը մեկօրյա /աշխատանքային/ ժամկետում խախտում թույլ տված հանրային պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականցնող անձանցից պահանջվում է Ծառայողական քննության /կարգապահական վարույթ/ ընթացքում քննարկվող խախտման մասին գրավոր բացատրություն /զեկուցագիր և այլն/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ.
գ.Ջրաբեր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 35

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հնրապետության առողջապահության նախարարի 2021թվականի օգոստոսի 20-ի թիվ 65-Ն հրամանով սահմանված կանոնների պահպանումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզի Ջրառատի համայնքապետարանի անձնակազմի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության նկորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումային կարգավիճակի և բժշկական հակացուցումների վերաբերյալ արդյունքների գրանցման աշխատանքների կատարման պատասխանատու նշանակել Ջրառատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ.
գ.Ջրառատ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РА МАРЗ КОТАЙК ДЖРАРАТСКАЯ СЕЛЬСКАЯ ОБЩИНА
*03002528*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 37

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.Ջրառատ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքին՝ /ծածկագիր 07-056-0018-0001/ տրամադրվել է հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Ջրառատ, 7 Փ 3/1:

2. Դիմել կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ________
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 38

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 5 ՓՈՂՈՑԻ 26 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԽՈՐԴԱՆՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐԱՆՑՈՎ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրքի 60-րդ և 64-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Վարանցով Աղվանի Բադալյանի/14.12.1956թ., Կոտայքի մարզ, գ. Ջրառատ, անձնագիր AT 0359952/ դիմումը՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Վարանցով Աղվանի Բադալյանի /ծնված 14 դեկտեմբերի 1956թ., Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, անձնագիր AT 0359952/ /սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 0004-0006 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.06004հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրանց կողմից մինչև 2001թվականի մայիսի 15-ը:

2. Վերականգնել Ջրառատ համայնքի 5-րդ փողոցի 26 հասցեում գտնվող 0.06004հա հողամասի վրա մինչև 2001թվականի մայիսի 15-ը կառուցված 60,59 քմ բնակելի տան, 13,17 խորդանոցի նկատմամբ Վարանցով Աղվանի Բադալյանի /14 դեկտեմբերի 1956թ., Կոտայքի մարզ, գ.Ջրառատ 3 Փ 12 , անձ. AT 0359952/սեփականության իրավունքը:

3. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, համապատասխանում են քաղաքաշինական նորմերին, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում սերվիտուտ:

4. Դիմել անշարժ գույքի կադաստրի կոմիտեի գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ.
գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 39

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 5 ՓՈՂՈՑԻ 28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԽՈՐԴԱՆՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիքի 60-րդ և 64-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Սպարտակի Հակոբյանի/31 հուլիսի 1967թ., Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, Յ/մ գործ. հանր. 532-33, անձնագիր AN 0440604/ դիմումը՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Արթուր Սպարտակի Հակոբյանի /ծնված 31 հուլիսի 1967թ., Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Կենտրոն թաղ. Յ/մ գործ., հանր 532-33, անձնագիր AN 0440604/ /սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 0004-0007ծածկագրով փաստացի օգտագործվող 0.07948հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրանց կողմից մինչև 2001թվականի մայիսի 15-ը:

2. Վերականգնել Ջրառատ համայնքի 5-րդ փողոցի 28 հասցեում գտնվող 0.07948հա հողամասի վրա մինչև 2001թվականի մայիսի 15-ը կառուցված 59,46քմ բնակելի տան, 14.47 խորդանոցի նկատմամբ Արթուր Սպարտակի Հակոբյանի /31 հուլիսի 1967թ., Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն թաղ., Յ/Մ գործարանի հանր. 532-33, անձ.AN 0440604/սեփականության իրավունքը:

3. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, համապատասխանում են քաղաքաշինական նորմերին, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում սերվիտուտ:

4. Դիմել անշարժ գույքի կադաստրի կոմիտեի գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ.
գ.Ջրառատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 40

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ջրառատ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 42-Ն որոշումն՝ **որոշում եմ.**

1. Ջրառատ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 15-ի «Ջրառատ համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 42-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները.

1.1.1.51 ծրագրի 5113 հոդվածի «655 000» թիվը փոխարիներ «600 000» թվով

1.1.1.51 ծրագրի 5122 հոդվածի «435 100» թիվը փոխարինել «490100» թվով

1.1.1.51 ծրագրի 4235 հոդվածի «180 000» թիվը փոխարինել «166 000» թվով

1.1.1.51 ծրագրի 4261 հոդվածի «200 000» թիվը փոխարինել «214 000» թվով

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ.
գ.Ջրառատ